Ռաֆֆի

Օրորոցի երգը Զեյթունցի հայ տիկնոջ

Նանի՛կ արա, սիրուն որդյակ,
Դու նանի՛կ, նանի՛կ, նանի՛կ,
Նանի՛կ արա, շուտ մեծացիր,
Քեզ մատա՛ղ է իմ ջանիկ:

Օրորոցդ մոր ձեռքով՝
Մեղմիկ, հանդարտ, կըշարժեմ,
Քո մեռած հոր հիշատակը
Քեզ երգելով կըպատմեմ,

Հայրդ էր հզոր առյուծ,
Այն քաջ արին Երվանդ,
Նա ուներ դեպ յուր ցեղը՝
Շատ սեր, շատ գութ, շատ եռանդ:

Մի օր հեծավ յուր սև ձին,
Ելավ նա դեմ ոսոխին,
Յուր հետ յուր քաջ ծառաներ՝
Գնաց հալածել թշնամին:

Թշնամին էր քաշն Ռավո՝
Այն վիթխարի աժդահան՝
Զարկեց հորդ սրտի մեջ
Յուր նիզակը հոգեհան:

Զարկեց հորդ սպանեց,
Հոտերն ավար տարավ,
Վրանները կողոպտեց,
Նա մեզ ոչինչ չընթողեց:

Նանի՛կ արա, աչքի լո՛ւյս,
Նանի՛կ, որ շուտ մեծանաս,
Քո անտերունչ քաջ ցեղին
Հորդ փոխան տիրանաս:

Մեր ծաղկավետ սարերը,
Մեր խոտավետ արոտներ,
Արածում են թշնամյաց
Եվ օտարներու հոտեր:

Մեր պաղ, հստակ աղբյուրներ
Պղտորում են պիղծ շրթունք,
Թշնամուհյաց կուրծքերը՝
Զարդարում են մեր ծաղկունք:

Հպարտ, ազատ մեր ցեղը,
Ամոթալի՜ հիշատակ…
Առել է յուր պարանոց
Մեր հաղթողի լծի տակ:

Իսկ մենք պանդուխտ, անտերունչ,
Թափառում ենք սարից սար,
Օտար ձեռքերու կարոտ,
Հողին եղած հավասար:

Անարգ, գերի, անպատիվ,
Որպես պիղծ ազգ անամոթ,
Թքում են մեր երեսին,
Ապտակ զարկում մեր գլխին:

Նանի՛կ կասեմ, իմ հրեշտակ,
Նանի՛կ կասեմ երգելով,
Նանի՛կ կասեմ երգելով,
Ողբ երգելով ու լալով...

Երբ մեծացար աստուծով,
Առ հորդ նետ-աղեղը,
Հեծի՛ր նորա նժույգը,
Կրկին տիրե՛ քո ցեղը:

Խնդրե հորդ վրեժը
Այն քաջ, անգութ հաղթողեն,
Ա՛ռ նորանից հոտերը,
Արտաքսե՛ մեր սարերեն:

Նորա երկաթի կուրծքի մեջ
Դու էլ ցըցե քո մըզրախ,
Երկու բուռն արյունից
Դու խմե ուրախ-ուրախ2:

Խմե՛, և թո՛ղ հովանա
Քո մոր կրակված սիրտը,
Խմե՛, և թո՛ղ հանդարտվեն
Հորդ կարոտ ոսկերքը:

Նանիկ կասեմ, դու քնե՛,
Ո՛վ իմ հրեշտակ արդար,
Քնե, զի դու միայն ես
Մորդ սրտին մխիթար…